

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36/5

25 նոյեմբերի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Կիմա Ամիրյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ 17.10.2016թ. թիվ 2136643 ակտի դեմ:

Ա/Ձ Կիմա Ամիրյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Կիմա Ամիրյանը (այսուհետ նաև՝ գանգատաբեր) հայտնում է, որ 2016 թվականի սեպտեմբերի 27-ին ժամը 16:30 ընթացքում, երբ նոր էր բացել իրեն պատկանող փոքրիկ խանութը, Աշտարակի հարկային տեսչության աշխատակիցները մուտք գործելով խանութ կատարել են գնումներ:

Գանգատաբերը նշում է, որ 67 տարեկան է, եղել է հոգեկան անհավասարակշիռ վիճակում, քանի որ ամբողջ օրվա ընթացքում ունեի բարձր ճնշում, միաժամանակ 6 ամիս առաջ կորցնելով երիտասարդ աղջկան, հաճախակի դուրս է գալիս հոգեկան հավասարակշիռ վիճակից: Նա նշում է նաև, որ տրամադրել է ՀԴՄ կտրոն գնված օճառների արժեքի չափով՝ գումարով 800 դրամ: Գանգատաբերը ստուգող անձանց տեղեկացրել է այն մասին, որ վատառողջ լինելու պատճառով խանութը ուշ է բացել, սակայն նրանք հաշվի չառնելով այդ հանգամանքը կազմել են 150.000 դրամի չափով ակտ:

Գանգատաբերը հայտնում է նաև, որ գտնվում է ֆինանսական ծանր վիճակում և խնդրում է չեղարկել կազմված ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի 14.09.2016թ-ի թիվ 2136643 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Կիմա Ամիրյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ 17.10.2016թ. թիվ 2136643 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Հայկազ Կարապետյանի կողմից 27.09.2016թ. ժամը 16:39-ին ք.Ապարան, Բաղրամյան 19 շենքի դիմացի հասցեում գործող Ա/Ձ Կիմա Ամիրյանին պատկանող առևտրի կետից կատարվել է 2300 դրամի գնում՝ 2 հատ սպասք լվանալու հեղակ «Ֆեյրի» և 2 հատ օճառ «Սեյֆորդ», որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ-ի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 16:43-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել

«Z» հաշվետվություն՝ 800 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման գումարը ժամը 16:44-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 16:49-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվություն՝ 2300 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.03.2015թ. թիվ 379-Ն որոշման 17 կետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում Ա/Ձ Կիմա Ամիրյանը նշեց, որ Ակտի 1-ին կետում նկարագրվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ստուգման ընթացքում գնված ապրանքների ընդհանուր գումարը կազմել է ոչ թե 2300 դրամ, այլ՝ 800 դրամ: Մասնավորապես, Ա/Ձ Կիմա Ամիրյանը պնդեց, որ ստուգման ընթացքում իրենից գնվել է երկու հատ օճառ՝ ընդհանուր գումարով 800 դրամ, որի դիմաց վճարված գումարը սահմանված կարգով մուտքագրվել է ՀԴՄ և տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Այլ ապացույցներ, որոնք կհիմնավորեին Ա/Ձ Կիմա Ամիրյանի մոտից 2300 դրամի գնում կատարված լինելու հանգամանքը, սույն գանգատի քննության ընթացքում չներկայացվեցին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում կրում է վարչական մարմինը:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ իրականացված ստուգմամբ չի հիմնավորվել Ա/Ձ Կիմա Ամիրյանի մոտից 2300 դրամի չափով գնում կատարված լինելու և վերջինիս կողմից համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն տրամադրված չլինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ 17.10.2016թ. թիվ 2136643 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ